Ա.Լ. ՄՅԱՍՆԻԿՅԱՆԸ ԴՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԿՈՒՍԱԿՑԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

ԳՈՐԳՈՐ ՇԱՐԳՍՅԱՆ

Մարքսիզմի և հեղափոխական շարժման փորձի բազմակողմանի ուսումնասիրությամբ Մյասնիկյանը հանգեց կուսակցականության լենինյան սկզբունքի ըմբռնմանը, որը նոր լույս ու մարտական շեշտ հաղորդեց նրա գրական-հրապարակախոսական գործունեությանը։ Նա պարզորոշ տեսավ, որ բուրժուազիայի լակեյները թեև փորձում են քողարկվել «անկուսակցականության» դիմակով, բայց, ըստ էության, ծառայում են տիրապետող դասակարգերի շահերին և արտահայտում նրանց կամքն ու ձգտումները։ Ամենուրեք, թե՛ կյանքում և թե՛ գաղափարախոսության մեջ «բուրժուազիան խաբում է»[1],— գրել է Մյասնիկյանը 1907 թ. և համոզիչ կերպով ցույց տվել «անկուսակցականության» դիմակի տակ հանդես եկող հրապարակախոսների գործունեության բուն իմաստը։ Սքողել դասակարգային հակամարտությունները, ապակողմնորոշել մտավորականությանը և հեռու պահել նրան հեղափոխական պայքարից,— ահա այդ կարգի գործիչների նպատակը, որին հասնելու համար բուրժուազիան ու նրա պնակալեզները շատ են սիրում շաղակրատել «անկուսակցականության» մասին։

Դա, իհարկե, կեղծիք է, քանի որ կյանքի ու մշակույթի ամենատարբեր բնագավառներում, այդ թվում և դպրոցի, կրթության ու դաստիարակության ոլորտում բուրժուազիան, ինչպես նշել է Մյասնիկյանը, «առաջ է տանում իր դասակարգային կուսակցական քաղաքականությունը»։ Հետևաբար, «ապադասակարգայնության» ու «անկուսակցականության» մասին խոսելը խաբուսիկ ձև է, դատարկ շաղակրատանք, որը և ամենուրեք մերկացնում էին մարքսիստ-լենինյանները։

Այդ իմաստով մասնավորապես ուշագրավ է Մյասնիկյանի «Դիմակավորված մենաշնորհությունը» հոդվածը (1907 թ.), որը Ս. Սպանդարյանի «Դպրոցական հարցը և սոցիալ-դեմոկրատիան» հոդվածից (1906 թ.) հետո լենինյան հռչակավոր աշխատության («Կուսակցական կազմակերպություն և կուսակցական գրականություն») առաջին արձագանքներից է մեր իրականության մեջ։ Այստեղ քսանամյա Մյասնիկյանը հանդես է գալիս որպես գաղափարախոսության կուսակցականության կրքոտ պաշտպան ու պրոպագանդիստ և վճռականորեն մերկացնում բուրժուական երեսպաշտներին, բացահայտում նրանց «դիմակավորված» կուսակցականության արգահատելի էությունը։

Մյասնիկյանը նշում է, որ «...ներկա կարգերը կապիտալիստական կամ բուրժուական են և ամեն ինչ շահեցվում է հօգուտ բուրժուազիայի, հօգուտ նրա դասակարգի»[2]։ «Ամեն ինչ» ասելով հոդվածագիրը, ինչպես երևում է հետագա շարադրանքից, նկատի ունի նաև գաղափարախոսության միջոցները,

---

1 «Նոր կյանք», 1907, № 19, էջ 253։

2 Նույն տեղում։

այդ թվում և գրականությունն ու արվեստը, որ ծառայեցվում են «բուրժուազիայի շահերին, քանի որ տիրապետող դասակարգը նա է»։

Բուրժուազիան և նրա հոգևոր զինակիրները ամեն կերպ աշխատում են իրենց քաղաքականությունը վարագուրել դասակարգերի «համերաշխության», «դործակցության» կամ, ինչպես սովորաբար ասում են, «անկուսակցականության» թանձր քողով։

Այդ առիթով էլ Մյասնիկյանը խիստ քննադատում է Վ. Զուբարյանի «Պե՞տք է արդյոք աշակերտական կուսակցական կազմակերպություններ» հոդվածը, որը, ինչպես մարքսիստ հրապարակախոսն է ասում, լի է «վտանգավոր ու կեղծ պոլիտիկայի մարգարիտներով»։ Նա համոզիչ կերպով ցույց է տալիս, որ «անկուսակցականության» անունից շաղակրատող Զուբարյանը փաստորեն պաշտպանում է բուրժուական սկզբունքները դպրոցական հարցում։ Մյասնիկյանի խորին համոզմամբ ժամանակակից դպրոցն իր կրթության ու դաստիարակության ամբողջ սիստեմով տոգորված է բուրժուական գաղափարախոսությամբ և ծառայում է լոկ բուրժուազիայի շահերին։ «Ներկա դպրոցներում կրթությունն ու դաստիարակությունը ի՞նչ ոգով են առաջ տարվում,— հարցնում է Մյասնիկյանը և պատասխանում.— Արդեն հոգնեցինք կրկնելուց— բուրժուական»։ Նա միաժամանակ ընդգծում է, որ «անկուսակցականության դիմակի տակ թաքնված մանկավարժներն ու մատաղ սերնդի բարյացակամները» ամեն կերպ խոչընդոտում են ճնշված դասակարգի՝ պրոլետարիատի գաղափարների ներթափանցմանը դպրոց. «...թույլ տվեք, որ նա այդ հասկացողությունը դպրոց մտցնի։ Չէ՛, դուք դիմակավորված կուսակցականներ եք»[3],— ասում է Մյասնիկյանը։

«Բուրժուազիայի դասակարգային կուսակցական քաղաքականության ասպարեզ» էր դարձել ո՛չ միայն դպրոցը, այլև մամուլն ու գրականությունը։ Ուստի, պատահական չէ, որ, ինչպես դարձյալ նշում է Մյասնիկյանը, ժամանակի գեղարվեստական գրականությունը լցվել է անկումային տրամադրություն, վհատություն ու հասարակական ինդիֆերենտիզմ տարածող երկերով։ Այն հետաքրքրվում է միայն «բուրժուական սիրո, ընտանեկան փոթորիկների, այլևայլ արկածների, կամ թե բուրժուական ողջախոհության և պսիխոլոգիայի արտադրությամբ...»[4]։ Այդ գրականության մեջ պրոլետարիատի «ցավերի ու ձգտումների մասին», նրա փայփայած երազանքների վերաբերյալ կամ բան չկա, կամ էլ «եթե գտնում ենք, այն էլ շատ ընչին ու անորոշ դոզաների վերածած»,— ասում է Մյասնիկյանը։ Նրա համար միանգամայն պարզ է, որ «բուրժուազիան ամենայն տեղ դրել է յուր թաթը», որ ինչպես ամենուրեք, այնպես էլ դպրոցում, մամուլի ու գրականության մեջ նա «տանում է յուր դասակարգային և այս դեպքում՝ կուսակցական պոլիտիկան»։

Հետևաբար, «անկուսակցականության» մասին շաղակրատանքը սոսկ ծխածածկույթ է սեփական դասակարգային շահերը քողարկելու և մասսաներին մոլորեցնելու համար։ Այդ պատճառով էլ Մյասնիկյանը մինչև վերջ մերկացնում է «անկուսակցականության» դիմակի տակ հանդես եկող Զուբարյանին և նրա հոդվածը համարում «հայ տարտամ ու տատանվող բուրժուական ուղեղի մտածմունք»։

---

3 Նույն տեղում, էջ 253։

4 Նույն տեղում, էջ 252—253։

Ի հակադրություն բուրժուազիայի ու նրա գաղափարախոսների, որոնք ամեն կերպ թաքցնում են իրենց կուսակցականությունը, «պրոլետարիատը և նրա կուսակցությունը,— գրել է Մյասնիկյանը,— կմտնեն ամեն տեղ, նույնպես և դպրոց իրանց պրոլետարական ոգին տարածելու համար»[5]։ Հենց այդ պրոլետարիատի ոգու, բանվոր դասակարգի շահերի բացահայտ ու կրքոտ պաշտպանության մեջ էր նա տեսնում լենինյան կուսակցականության իմաստը, որը և դարձրեց ղեկավար սկզբունք իր հեղափոխական ու գրականագիտական գործունեության համար։ Ահա թե ինչու խոսքն ուղղելով բուրժուական գաղափարախոսներին, Մյասնիկյանը գրել է. «Դուք ասում եք բանվորին՝ „руки прочь и подчиняйся“, սակայն այդ հսկան հոգնել է այդ բարբաջանքները լսելուց. նա պատրաստում է այն կտավը, որով՝ մի գեղեցիկ օր գերեզման կիջնի ամբողջ բուրժուական աշխարհը»[6]։

Մարտակոչի նման հնչող այդ խոսքերով է դիմում Մյասնիկյանը բուրժուական գաղափարախոսներին, որոնք կաշվից դուրս էին գալիս քողարկելու իրենց կուսակցականությունը։ Բայց, ինչպես միշտ, այս դեպքում ևս նրանց դիմակը անմիջապես պատռվում է հենց որ դիպչում է պատմագրական պրոցեսը մարքսիստորեն քննող հրապարակախոսի նշտարին։

Մյասնիկյանը լավ էր հասկանում, որ հակամարտ հասարակության մեջ, որտեղ շահագործողների ու շահագործվողների միջև շարունակ տեղի է ունենում կենաց ու մահու պայքար, չի կարող խոսք լինել «անկուսակցականության» մասին։ Եվ որքան էլ բուրժուազիայի հոգևոր պետերը դիմեն կեղծիքի ու խարդախության, միևնույն է, նրանք ծառայում են տիրապետող դասակարգի շահերին և դրանով իսկ դառնում նրա սպասարկուները. «Դուք դիմակավորված կուսակցականներ եք»,— գրել է Մյասնիկյանը նրանց մասին։

Մերկացնելով «անկուսակցականության» լոզունգը որպես բուրժուական գաղափար՝ մարքսիստ հրապարակախոսը նույն թվականին գրած «Ռամկավար հանրապետություն» հոդվածում հանդես է գալիս բանվորական դեմոկրատիայի շահերի ու պահանջների ակտիվ պաշտպանությամբ։ Նա ցույց է տալիս, որ գնալով ավելի ու ավելի է սրվում դասակարգային պայքարը, ընդգրկելով հասարակական ամբողջ կյանքը։ «Այսօր Ռուսաստանում կատաղի կռիվ է գնում ժողովրդի և միջնադարյան բռնակալ կառավարության միջև,— գրել է նա 1907 թ.,— հեղափոխությունը դեռ չի հասել իր վախճանին։ Նրան գլխավոր զարկ տվողն է սոցիալիստական պրոլետարիատը, որն իր ետևից քարշ է տալիս և ծառացնում ժողովրդի այլ հեղափոխական խավերը»[7]։ Գիտակից պրոլետարիատը վաղուց է հասկացել, որ «մարդկային հասարակության մեջ գոյություն ունեցող դասակարգային կռիվը, հարստահարությունը և անհավասարությունը կվերանա միմիայն այն ժամանակ, երբ մասնավոր սեփականությունը տեղի կտա սոցիալիստական կարգերին»[8]։ Դրա համար էլ պրոլետարական խավերը հեղափոխական սոցիալ-դեմոկրատիայի ղեկավարությամբ կազմակերպվում ու գրոհում են կապիտալիզմի դեմ, որ այնուհետև հաղթական քայլերով ընթանան դեպի առաջ, դեպի սոցիալիզմ։

---

5 Նույն տեղում, էջ 254։

6 Նույն տեղում։

7 «Մայիսի մեկը», ժողովածու, Բաքու, 1907, էջ 9, նաև՝ Ա. Ալ. Մ յ ա ս ն ի կ յ ա ն, Ընտիր երկեր, Երևան, 1957, էջ 13—14։

8 Նույն տեղում։

Պրոլետարիատի «մոտակա պահանջների և վերջնական նպատակի» տեսանկյունից էլ Մյասնիկյանը քննում ու մեկնաբանում է տիրող կյանքի հակասությունները և դրանցով պայմանավորված հասարակական-գաղափարական երևույթները։ Նա հանգում է այն ճիշտ հետևության, որ դասակարգային հասարակության մեջ, ուր արտադրահարաբերությունների հիմքը մասնավոր սեփականությունն է, կյանքը զարգանում է հակադիր դասակարգերի միջև ծավալվող գոռ պայքարով։ Ոչ հասարակական որևէ խնդիր կամ շարժում,— գրել է Մյասնիկյանը 1911 թ.,— որ իր վրա չկրի դասակարգային կնիքը. «Այդ հանգամանքը ժխտել կարող են միայն հասարակական մտքի տհաս ու միամիտ տիպերն ու հետո այն մարդիկ, որոնք չեզոքության շղարշի տակ ջանում են անցկացնել ամենավատ ու վտանգավոր տեսակի դասակարգային ապրանք»[9]։

Հետևաբար, «չեզոքության շղարշը» կամ «անկուսակցականության» քարոզը սուտ միջոց է «ամենավատ ու վտանգավոր տեսակի դասակարգային ապրանք» անցկացնելու, բուրժուական գաղափարներ տարածելու համար։ Դա առանձնապես դրսևորվեց ռեակցիայի տարիներին, երբ ուժեղացան քայքայումն ու անկումայնությունը մտավորականության մեջ։ Այդ երևույթը ժամանակին նկատել էր նաև Մյասնիկյանը, որն իր նամակներից մեկում անդրադառնալով մտավորականության հուսալքությանը՝ գրել է. «Լքումը ինտելիգենցիայի մեջ ամենամեծ չափով առաջանում է քաղաքական գործունեության ակտիվ կերպով դիմելու հնարավորության բացակայությունից...»[10]։

Եվ արդարև, զրկված լինելով քաղաքական ակտիվ գործունեության հնարավորությունից՝ մտավորականության զգալի մասը բավականաչափ եռանդ ու հետևողականություն չունեցավ դիմադրելու ռեակցիայի հարվածներին, հուսալքվեց և թողեց պայքարի դաշտը։ Քաղքենիական ու մտավորական տարրերն աշխատում էին հարմարվել բուրժուական բարքերին և նույնիսկ համերաշխվել ցարիզմի հետ։

Նման պայմաններում գրականության մեջ ակտիվացան բուրժուական դեկադանսի տրամադրություններ տարածող հոսանքները, ուժեղացան արվեստի վերասերման դրսևորումները։ Գրական շուկան հեղեղվեց միստիկա, այլասերվածություն ու լրտեսություն քարոզող գրվածքներով, որոնք ունեցան նաև իրենց տեսաբանները. «Սանին, Պինկերտոն, Վեյնինգեր ու մազոխիզմ՝ մի կողմից, աստվածախույզներ ու միստիկներ, կրոնական պսիխոպատներ ու Մերեժկովսկի-Գիպպիուս-Ֆիլոսոֆովյան տիպի ստորարժեք քննադատներ՝ մյուս կողմից»[11]։

Այսպես է բնութագրել տիրող ռեակցիոն գրականությունն ու քննադատությունը Մյասնիկյանը։ Առանձին անունների ու երևույթների հմուտ օգտագործմամբ նա տվել է ռեակցիայի տարիների գրականության ծանր վիճակը, երբ ուժեղացան անկումային դեկադենտական տրամադրություններն ու դրանց անսքող պաշտպանությունը։ Եթե մի շարք գրողներ քարոզում էին անբարոյականություն (ինչպես Արցիբաշևը «Սանին» վեպում), փառաբանում լրտե-

---

9 «Նոր կյանք», 1911, № 1—2, էջ 54։

10 Մարքսիզմ-լենինիզմի ինստիտուտի հայկական մասնաճյուղի արխիվ (այսուհետև՝ ՄԼԻ արխիվ), ֆ. 4004, ց. 3, գ. 7, մաս 1։

11 «Մշակ», 1914, № 38, Ա ն. Մ յ ա ս ն ի կ յ ա ն, Ընտիր երկեր, էջ 117։

սությունն ու պրովոկացիան ընդդեմ բանվոր դասակարգի (Ալլա Պինկերտոնի հիմնադրած դործակալության մեթոդները) և կամ տարված էին Օտտո Վեյնինգերի պրոպագանդած «ուժեղ անհատի» նիցշեյական կուլտով, ապա Մյասնիկյանի խոսքերով ասած՝ «ստորարժեք քննադատներն» էլ տեսականորեն պաշտպանում ու խրախուսում էին նման գրական վիժվածքները։ Քննադատության մեջ ռեակցիայի հարձակումը նշանավորվեց «աստվածախույզների ու միստիկների» կրոնա-փիլիսոփայական զառանցանքներով, ոչ անհայտ Մերեժկովսկու, Գիպպիուսի և Ֆիլոսոֆովի գրական-տեսական մարգանքներով։

Պարզ է, որ այս ամենը բացասաբար էր անդրադառնում գրական կյանքի վրա։ Անհրաժեշտ էր վճռական հակահարված հասցնել աշխուժացած հակաժողովրդական հոսանքներին և ստեղծագործող ազնիվ մտավորականությունն ազատագրել մանրբուրժուական տարբեր բնույթի պատրանքներից ու նախապաշարումներից, որոնք չարաշահում էին ռեակցիայի սպասավորները։ Հարկավոր էր հետևողական, համբերատար դաստիարակչական աշխատանքի միջոցով համախմբել ու կազմակերպել գրականության ու արվեստի առաջավոր գործիչներին և նրանց տոգորել ժողովրդին ազնվորեն ծառայելու, միապետական-բուրժուական սիստեմը հիմնովին վերափոխելու գիտակցությամբ։

Այդ պահանջի կենսագործմանը ձեռնամուխ եղան մարքսիստական հրապարակախոսության կարող ուժերը, նրանց թվում և Ալ. Մյասնիկյանը։ Վերջինս նույնպես կուսակցական աշխատանքին զուգընթաց զբաղվեց գրականության ու արվեստի հարցերով, ուսումնասիրեց ու պրոպագանդեց գեղարվեստական արժեքները։ Այդ իմաստով առանձնապես ուշագրավ է նրա 1909 թ. հոկտեմբերի 3-ին Մոսկվայից գրած նամակը Մ. Սարյանին. «Կյանքն այստեղ առհասարակ տաղտկալի է. երբեմն նրա մեջ որոշ թարմ հոսանք է մտցնում գրականությունը... Առայժմ աչքի եմ անցկացնում այն բոլորը, ինչ-որ թողել եմ ետևում և նորություն է ինձ համար։ «Աշնանային աստղերի տակը» դուր եկավ ինձ, այժմ կարդում եմ Ռոդենբախին։ Կլանված կարդում եմ Վերհարնին։ Մարտիրոս, եթե նրան չես կարդացել, ապա աշխատիր ձեռք բերել ու կարդալ։ Սքանչելի բանաստեղծ է։ Զարմանալի կերպով ինձ դեպի իրենց են ձգում Դոստոևսկին, Բելինսկին։ Ա՜յ քեզ կլասիկներ։ Չէ՞ որ նրանք ավելի լավ են ապրում, քան ներկայիս գրողները»[12]։

Այստեղից դժվար չէ եզրակացնել, թե որպիսի անհագ հետաքրքրություն է ցուցաբերել տակավին ուսանող Մյասնիկյանը դեպի գրականությունն առհասարակ։ Նա հատուկ ուշադրությամբ է ուսումնասիրել դասականների երկերը, տարվել ճնշված մարդկանց հոգեկան տառապանքը վարպետորեն պատկերող Դոստոևսկու և հեղափոխական դեմոկրատիայի բոցաշունչ տրիբուն Բելինսկու գործերով։ Նրան ոգեշնչել է բելգիական նշանավոր բանաստեղծ Էմիլ Վերհարնը, որի առաջին գնահատողներից ու պրոպագանդիստներից էր Մյասնիկյանը մեզանում։

Դրա հետ միաժամանակ նույն նամակում Մյասնիկյանը հայտնում է, որ իրեն շատ է հետաքրքրում արվեստի խնդիրը և ձգտում է հասկանալ ու մեկնաբանել նրա բնույթն ու էությունը. «Արվեստի հարցը ինձ զբաղեցնում է, բայց չեմ գտնում համապատասխան աշխատություններ այդ առարկայից կար-

---

12 ՄԼԻ արխիվ, ֆ. 4004, ց. 1, գ. 1, նաև՝ А. Мясникян (Мясников), Избранные произведения, Ереван, 1965, стр. 30.

դալու համար։ Սարսափելի սֆինքս է արվեստը, ինչպես էլ մեկնես, այնուամենայնիվ նրա հարցը մինչև այժմ բավարար աստիճանի մշակված չէ։ Ես նկատի ունեմ տվյալ երևույթի պատճառականությունը։ Ինչի՞ց է նա կախված, ինչո՞վ է պայմանավորված, այլ կերպ՝ ինչպե՞ս հասկանալ այն»[13]։

Այս տողերից պարզ երևում է Մյասնիկյանի ակտիվ հետաքրքրությունը արվեստի նկատմամբ, նրա ծագման ու զարգացման պատճառականությունը հասկանալու մտահոգությունը և արդարացի դժգոհությունը, որ այդ հարցը տակավին բավարար չափով լուսաբանված չէ։ Չնայած դրան, երիտասարդ մարքսիստը հանգում է այն ճիշտ հետևության, որ արվեստն իր տարբեր տեսակներով սերտորեն կապված է մարդկանց նյութական-կենսական պայմանների հետ և կրում է հասարակական հարաբերությունների դրոշմը. «...ինձ թվում է,— կարդում ենք նույն նամակում,— որ իր շատ դրսևորումների մեջ, իր շատ տեսակներով ու ենթատեսակներով նա (արվեստը— Գր. Ս.) կապված է ժողովուրդների տնտեսական կյանքի հետ։ Հասարակական միջավայրի հարաբերությունները իրենց կնիքն են գնում արվեստի վրա»[14]։

Ուրեմն, հասարակության կեցությամբ են պայմանավորված հասարակական գիտակցությունը և նրա ձևերից մեկը՝ արվեստը։ Վերջինս հանդիսանում է մարդկանց հասարակական կեցության արտացոլումը։ Մարքսիստական փիլիսոփայական մատերիալիզմի այս դրույթը մի փոքր հետո Մյասնիկյանի մոտ ստանում է հետևյալ ձևակերպումը. «...հասարակական գաղափարները որևէ շրջանի անընդմեջելի են առանց այդ գաղափարների հեղինակների, որպիսին հասարակական խավերն են հանդիսանում։ Իսկ սրանք կապված են հասարակական կյանքի նյութական բովանդակության՝ յուրաքանչյուր ժամանակի տնտեսական դրության հետ»[15]։

Նշանակում է հասարակության հոգևոր կյանքի ձևավորման աղբյուրը պետք է որոնել նրա նյութական կյանքի, տնտեսական պայմանների մեջ։ Նյութական-արտադրական գործունեությամբ է պայմանավորված վերնաշենքային ամեն մի երևույթի, այդ թվում և գրականության ու արվեստի զարգացումը։ Եվ որովհետև հասարակության զարգացման հետ միասին փոխվում են նաև նրա նյութական կյանքի պայմանները, այդ պատճառով էլ տարբեր ժամանակաշրջաններ ծնունդ են տալիս տարբեր գաղափարների ու հայացքների, համապատասխան բովանդակություն ունեցող գեղարվեստական երկերի։

Բնդրոշ է, որ այն ժամանակ, երբ մոլեգնող ռեակցիան իր ազդեցությունն էր տարածում նաև արվեստի ու գրականության ոլորտում, հայ մարքսիստներն ամեն կերպ աշխատում էին համախմբել մեր մտավորականության դեմոկրատական-առաջադիմական ուժերը և նրանց ստեղծագործական ջանքերն ի սպաս դնել մասսաների գաղափարա-գեղարվեստական դաստիարակությանը։ Գրականությունն ու արվեստը դիտելով որպես մարդկանց դաստիարակության զորավոր միջոց՝ Մյասնիկյանը նույնպես ձգտում էր կազմակերպել և ճիշտ ընթացքի մեջ դնել ստեղծագործող մտավորականությանը, օգտագործել նրա լավագույն ներկայացուցիչների տաղանդն ու եռանդը ժողովրդի,

---

13 Նույն տեղում, էջ 30—31։

14 Նույն տեղում։

15 «Գարուն», գիրք երկրորդ, Մ., 1912, էջ 208։

մասնավորապես երիտասարդության գեղագիտական դաստիարակության գործում։

Այդ տեսակետից ուշագրավ է հետևյալ փաստը. Մոսկվայի համալսարանում ուսանելիս Մյասնիկյանն ուսանողական միության անունից դիմում է մեծանուն երաժիշտ Կոմիտասին և խնդրում, որ նա գա Մոսկվա և ուսանողության համար ու նրա օգտին համերգներ տալու նպատակով ուսանողական ուժերով կազմի երգեցիկ խումբ։ Դա երևում է այն պատասխան նամակից, որ գրել է կոմպոզիտորը 1909 թ. նոյեմբերի 5-ին, Էջմիածնից.

«Հարգո պ. Ալեքսանդր Մյասնիկյան,
Ձեր նամակը ստացա երեկ, բացակա էի...

Ուսանողական միությանդ հղացած միտքն իսկ և իսկ նպատակներիս է ընդառաջ գալիս. մեծ սիրով կուզեի մի այսպիսի կարևոր գործ ուսանողությանդ միջոցով և հօգուտ նորա կատարել, բայց գոնե այս տարի հանձն առնել չեմ կարող, զի Գ. Ճեմարանում դասերով կապված եմ և Մայր Տաճարի մեջ էլ խմբապետության պաշտոնով. ո՞չ մի օգնական չունիմ. ուստի ցավելով և ստիպված մերժելու եմ։ Ձեր ուզած և իմ ցանկացած համերգը պատվավոր գլուխ բերելու համար անհրաժեշտ է առնվազն մեկ և կես ամիս՝ գալու-գնալու և պատրաստելու համար, իսկ այդքան երկար ժամանակ ինձ դժվար թե թողնեն բացակայեմ։ Բայց և այնպես, փորձեցեք՝ դիմեցեք պաշտոնապես Վեհափառին, գուցե թույլատրում է, այն ժամանակ կգամ. ես պատրաստ եմ ծառայելու։ Եթե այդ չի հաջողվի, կթողնենք եկող տարվան, երբ ես այլևս ուսուցչությունը թողնելու եմ, ազատ եմ և կարող եմ։

Հարգանքներով՝
Կոմիտաս վարդապետ»[16]։

Սույն նամակն արժեքավոր է նախ այն առումով, որ վկայում է հենց Կոմիտասի պատրաստակամությունը՝ ամեն կերպ աջակցել ուսանող երիտասարդության երաժշտական դաստիարակությանը, մի գաղափար, որ ինչպես ինքն է խոստովանում՝ «իսկ և իսկ նպատակներիս է ընդառաջ գալիս»։ Եվ երկրորդ՝ այն ցույց է տալիս հայ մարքսիստների բարեկամական դիրքը դեպի մեր մշակույթի առաջադեմ գործիչները և նրանց ստեղծագործական ջանքերը համախմբելու անհրաժեշտության գիտակցությունը։ Միայն դրանով կարելի է բացատրել այն ջերմ վերաբերմունքը, որ այդ տարիներից Մյասնիկյանը ցուցաբերել է նաև Իսահակյանի, Տերյանի, Կուրղինյանի, Մ. Սարյանի, Գ. Լեվոնյանի և մեր գրականության ու արվեստի ուրիշ երախտավորների նկատմամբ։

Խորապես գնահատելով արվեստի և հատկապես գրականության դերը կյանքի, իրականության ճանաչման և աշխարհի հեղափոխական վերափոխման գործում՝ Մյասնիկյանը ևս աշխատում էր ժողովրդի հոգևոր հարստությունը կերտող մտավորականության առաջադեմ ուժերը համախմբել պրոլետարիատի շուրջը, նրանց առաջ տանել միապետական-բուրժուական կարգերը խորտակելու ճանապարհով։ Այդ նպատակով նա ոչ միայն անձնական-բարեկամական կապեր էր հաստատում հայ մշակույթի ականավոր գործիչների

16 «Սովետական արվեստ», 1956, № 2, էջ 9։

հետ, այլև օգտագործելով լեգալ հնարավորությունները՝ հանդես գալիս գրական-քննադատական հոդվածներով ու դասախոսություններով։ Հիշենք «Ինչպես են գրվում ռեցենզիաները մեզանում», «Միքայել Նալբանդյան» և այլ հոդվածներ, ինչպես և Մոսկվայի հայոց ժողովարանում 1910 թ. նոյեմբերի 23-ին կարդացած դասախոսությունը «Միքայել Նալբանդյան» թեմայով։

Այդ և ուրիշ նյութեր, որոնք ներթափանցված էին քաղաքացիական առողջ պաթոսով, խոր արձագանք գտան գրական շրջաններում, առաջ բերելով տարակարծությունների ակտիվ մթնոլորտ։ Եթե, օրինակ, լիբերալ բուրժուական մամուլը իր թղթակցի բերանով դժգոհ էր Մյասնիկյանի վերը նշված դասախոսությունից այն բանի համար, որ այդ «դասախոսության ընթացքում կարմիր թելի նման անցնում է մարքսիստական գիծը», որի պատճառով դասախոսն իբր թե «հայ իրականությանը տալիս է չափազանց բոնազբոսիկ ու արհեստական բացատրություն»[17], ապա առաջավոր մտավորականությունը ի դեմս Հ. Սուրխաթյանի ողջունեց ու պաշտպանեց Մյասնիկյանի նոր, մարքսիստական մոտեցումը պատմագրական հարցերը լուսաբանելիս. «Մի սարսափեք այդ տերմինից (խոսքը մարքսիզմի մասին է— Գր. Ս.)։ Վերջիվերջո այդ տեսակետով կատարվելիք ուսումնասիրություններն են, որ ապագայում միանգամայն պիտի հեղաշրջեն մեր վերաբերմունքն ու կարծիքը հայկական ամբողջ պատմական-հասարակական անցյալի նկատմամբ»[18]։

Սա նշանակում է, որ հայ պատմագրական անցյալի ուսումնասիրության մարքսիստական մեթոդը, որքան էլ դժվար էր կիրառվում և ուղի հարթում մեզանում, այնուամենայնիվ, ջերմ հավանություն ու պաշտպանություն էր գտնում հասարակական մտքի առաջադեմ ներկայացուցիչների կողմից։ Նրանք զգում կամ տեսնում էին այդ մեթոդի հեղափոխիչ ազդեցությունը հասարակական գիտակցության վրա, ուստի և համերաշխում մարքսիզմի հայ պրոպագանդիստներին։ Այս դեպքում ևս հաստատվում է Լենինի այն հայտնի միտքը, որ «...սոցիալիզմի գաղափարը և դեպի աշխատավորությունը տածած համակրանքը նորանոր ուժեր կհավաքագրեն»[19] գրական-ստեղծագործական աշխատանքի մեջ, եթե այն հյուսվի հասարակության առաջընթացին, միաձուլվի «իսկապես առաջավոր և մինչև վերջը հեղափոխական դասակարգի շարժման հետ»[20]։

Լենինի առաջադրած այդ մեծ ու պատվավոր խնդրի իրականացման համար մղված պայքարի առաջին գծում էր կանգնած նաև Մյասնիկյանը։ Նրա խորին համոզմամբ պրոլետարիատի հետ բացահայտորեն կապված գրական շարժումն իր զարգացման ընթացքի մեջ հետզհետե կներգրավի դեմոկրատական գրականության այն բոլոր ներկայացուցիչներին, ովքեր տոգորված են ժողովրդին ազնվորեն ծառայելու վսեմ գիտակցությամբ, ում համար թանկ են ազատությունն ու առաջադիմությունը։ Նա գիտեր, որ պրոլետարիատի ազատագրական պայքարն իր հեղափոխական թափով ու մասսայական ծավալով կհամախմբի երկրի դեմոկրատական ուժերը, այդ թվում և գրականության ու արվեստի նույնիսկ այնպիսի գործիչների, որոնք թեպետ անզոր են

17 «Մշակ», 1910, № 275։
18 Նույն տեղում, № 281։
19 Վ. Ի. Լենին, Երկեր, հ. 10, էջ 44—45։
20 Վ. Ի. Լենին, Երկեր, հ. 10, էջ 45—46։

ըմբռնելու պատմական զարգացման իմաստն ու միտումները, բայց ներքուստ դժգոհ են ցարական միապետական կարգերից և երազում են ժողովրդի լավագույն ապագայի մասին։

Ղեկավարվելով կուսակցականության սկզբունքով, Մյասնիկյանն այդ և հետագա տարիներին գրած իր հոդվածներում հետևողական դասակարգային մոտեցում էր ցուցաբերում այն ամենի հանդեպ, ինչ տեղի էր ունենում կյանքում և հոգևոր գործունեության ասպարեզում։

Համոզված, որ արվեստի ու արվեստագետի ազատության վերաբերյալ բուրժուական քարոզը կեղծիք է, կամ, ինչպես Լենինն էր ասում, քողարկված «կախում փողապարկից, կաշառումից, ոռճիկից»[21], մարքսիստ հրապարակախոսը վճռականորեն հանդես էր գալիս նման նվաստացուցիչ կախվածության դեմ։ Նա ցույց էր տալիս, որ տիրանալով հասարակության միջոցներին՝ բուրժուազիան «փողի իշխանության» շնորհիվ իր կամքն է թելադրում նաև գրականության ու արվեստի գործիչներին, նրանց դարձնում իր ստրուկները։

Այդ նպատակին էր ծառայեցվում նաև հայ իրականության մեջ լայն տարածում գտած բուրժուական բարեգործությունը, որը, ինչպես նշում էր Մյասնիկյանը, բազմել է «արքայական գահի վրա. բեմ, գրիչ ու ամբիոն, ողջ կուլտուրան ճնշվում է բարեգործության ծանրության տակ...»[22]։ Նրանով լայնորեն զբաղվում են մամուլն ու հրապարակախոսությունը, որոնք դառնալով տիրապետող դասակարգի սպասավորներ՝ փորձում են բթացնել աշխատավորության դասակարգային գիտակցությունը և հասարակական դիրք ու հեղինակություն ստեղծել բուրժուական բարեգործների համար։

Նկատի ունենալով հարցի կարևորությունը և, մանավանդ, այն, որ այդ տարիներին բարեգործությունը հայ իրականության մեջ դարձել է «հրատապ խնդիր», Մյասնիկյանը դատապարտում է այդ երևույթը և մինչև վերջ մերկացնում բարեգործություն կոչվածի ու նրա սպասավորների ռեակցիոն էությունը։ Այդ կապակցությամբ լուրջ հետաքրքրություն է ներկայացնում «Բարեգործությունը և նրա սպասավորները» հոդվածը (1912 թ.), որ տոգորված է մարտնչող կուսակցականության ոգով։

Հոդվածագիրը նախ ցույց է տալիս, թե ի՞նչ բան է բարեգործություն կոչվածը. մի քանի հարուստներ, իրենց կյանքի վերջին օրերին «մտաբերելով ազգը», փշրանքներ են թափում նրա առաջ և այդպիսի խորամանկ քայլով փորձում շլացնել միամիտներին ու թշվառ ազգային գործիչներին... երևույթն այնքան անսպասելի ու գրավիչ է, որ մամուլի օրգանները հեղեղվում են գովասանական հոդվածներով, նույնիսկ խմբագրականներով «մեկենասի տիտղոսին արժանացած որևէ դրամատիրոջ» հասցեին, ինչպես այդ պատահեց Մանթաշովի հետ։

Ճիշտ է նկատում Մյասնիկյանը, որ բարեգործությունը «բուրժուազիայի համար բարիք է, որով ամեն րոպե, յուրաքանչյուր քայլափոխին նա չի դադարի պարծենալուց՝ աշխատելով դրանով իր թշնամիների բերանը փակել։ Բարեգործությունը մի գործիք է, որ շատ է նպաստում բուրժուազիայի դասակարգային շահերին»[23]։ Մյուս կողմից՝ դա միջոց է հասարակական դիրք,

21 Վ. Ի. Լենին, Երկեր, հ. 10, էջ 44։
22 «Նոր կյանք», 1912, № 3—4, էջ 111։
23 Նույն տեղում, էջ 105։

բարձր հեղինակություն, ժողովրդականություն ձեռք բերելու համար, ինչպես տեսնում ենք, հայ իրականության մեջ։ Իբրև դրա ցայտուն օրինակ, Մյասնիկյանը հիշատակում է ժողովրդի արյուն քրտինքով ուռճացած Մանթաշովին, որի «առատաձեռնությունը» մարքսիստ հրապարակախոսի դիպուկ արտահայտությամբ, «նրան դարձնում է ամենից առաջ մտքերի ու գրիչների գերող»[24]։ Նա նկատի ուներ այն հանգամանքը, որ Մանթաշովի փշրանքներով սնված մամուլն ու մտավորականությունը խունկ էին ծխում նրա առաջ, դառնում նրա սպասավորը. «Այսօր հայ իրականության «տոն» տվող մամուլը նրա ձեռքում է գտնվում,— գրել է Մյասնիկյանը,— այսօր «դեմոկրատական» «Հորիզոն» թերթը իր առաջնորդող ու այլ հոդվածներում ողբում է նրա մահը, ցավի կսկիծով հիշում է, որ «մի գիտակից կուլտուրական գործիչ» է հեռանում կյանքի բեմից... որ ասպարեզից իջավ... մեծ, ազգային հիմնարկությունների գիտակից շինարարը» և այլն։

Մյասնիկյանը զայրացուցիչ է համարում նման փառաբանությունը, որի համար ոչինչ չեն խնայում հայ բուրժուական մամուլն ու մտավորականությունը։ Աչքի առաջ ունենալով նման հոդվածները, որոնցով հեղեղված էր դաշնակցական «Հորիզոնը», Մյասնիկյանը իրավացիորեն նշում է, որ այդ թերթը նման քարոզներով «թույն է մոտեցնում ժողովրդական մասսաների կուսական շրթունքներին»[25]։ Իսկ լիբերալ բուրժուական «Մշակը» հասնում է այնպիսի խայտառակության, որ գրում է. «թող հայ մանուկները «Հայրմեր»-ից հետո սովորեն և հիշողության մեջ միշտ վառ, միշտ սուրբ պահեն մեր բարերարների անունները»[26]։ Եվ նշանակալիցն այն է, որ հայ եկեղեցին տնաբույս նոր սրբերով հարստացնելու բուրժուական մամուլի այդ ջանքերը, ինչպես Մյասնիկյանն է ասում՝ ամենևին չեն անհանգստացնում կրոնի և եկեղեցու նախանձախնդիր մարդկանց. «Նրանք մի-մի թշվառական տարտյուֆներ են» և նրանց «դաստիարակությունը՝ շողոքորթությունն է, իսկ բարոյական չափը՝ ոսկե հորթը»[27]։

Այդօրինակ ստրկահաճության ու շահամոլության դեմ է ծառանում Մյասնիկյանը։ Նրա խորին համոզմամբ՝ բուրժուական բարեգործությունը սոսկ մի կարկատան է տիրող կարգերի խոցերը ծածկելու համար։ Այն «կոչված է ժողովրդական տարրերին քնեցնելու և տիրապետողների ձեռքին շահագործության համար գործիք դառնալու»[28]։ Բայց ժողովրդական մասսաները զնալով կազմակերպվում են ու «երես դարձնում քաղաքավարի ողորմությունից»։ Նրանց համար հետզհետե ավելի ու ավելի պարզ է դառնում, որ միայն հեղափոխական պայքարի միջոցով է հնարավոր ազատագրվել բուրժուազիայի ողորմությունից, նրա ստեղծած նյութական ու հոգևոր կապանքներից։

Ընդհանրացնելով այդ միտքը, Մյասնիկյանը հանգում է այն եզրակացության, որ հայ կյանքում կատարվող «առանձնահատուկ երևույթների» լուծումը ևս պետք է լինի ժողովրդական ճանապարհով և ոչ թե բուրժուազիայի ու նրա բարեգործության հովանու տակ. օրինակ, մի դպրոցական խնդիր, որ ամենից առաջ ժողովրդական խավերին է վերաբերում, այնինչ բուրժուազիան

24 Նույն տեղում։
25 Նույն տեղում։
26 «Մշակ», 1911, № 32։
27 «Նոր կյանք», 1912, № 3—4, էջ 110։
28 Ալ. Մ յ ա ս ն ի կ յ ա ն, Ազգային հարցի առթիվ, Մ., 1919, էջ 13։

է նրան ուղղություն տվողը»[29]։ Նա գտնում է, որ բոլոր, այսպես կոչված, ազգային հարցերի, այդ թվում և կուլտուրայի բախտը կապված է «համապետական պրոբլեմների հետ», ուստի և մեր առաջ ծառանում է «համառուսական աշխատանքի խնդիրը»։ Այդ նշանակում է, որ հայ ժողովրդի ազգային շահերը համընկնում են Ռուսաստանի բոլոր ժողովուրդների արմատական շահերին, ուստի հարստահարվող հայ աշխատավորներն իրենց ուժերը պետք է միացնեն «հանմանման խավերի հետ» և վճռական պայքար մղեն տիրող կարգերի դեմ. «Այստեղ պետք է մասսաների անդուլ եռանդը, քայլ առ քայլ առաջ տարվող գործը, որ շատ ծանր է ու դժվար, որի դիմաց ծառացած են ահագին խոչընդոտներ, որոնց հաղթահարելու համար մեծ ու անձնուզոհ կռիվ է պահանջվում»[30]։

Ինչպես կարելի է նկատել, Մյասնիկյանն անց էր կացնում հեղափոխական պայքարի գիծ, որը չէր կարող գրական ազդեցություն չունենալ ժամանակի գեղարվեստական մտավորականության վրա։ Նա ամեն կերպ աշխատում էր կազմակերպել և սոցիալական առաջադիմության համար մղվող պայքարի հունով տանել մտավորականությանը, նրա ստեղծագործական ուժերը ծառայեցնել բանվոր դասակարգի ու նրա կուսակցության վերափոխիչ գործունեությանը։

Այդ գիտակցությամբ էլ Մյասնիկյանը սրտանց ողջունեց գրական-հասարակական կյանքում կատարվող այն նոր տեղաշարժերը, որոնք, արդյունք լինելով հեղափոխական պայքարի նոր վերելքի, ազդարարում էին ժողովրդական շարժման հզոր թափը։ «Ամեն տեղ աչքի է զարնում հասարակության արթնացումը, որ ավելի քան ակնհայտ է ու նշանակալից պրոլետարական բանակում, հասարակության այդ ամենաառաջադեմ ու ազատարար խավի ծոցում»[31],— գրել է Մյասնիկյանը «Արթնացումը» վերնագրով հոդվածում (1914 թ.)։ Նա գոհունակությամբ է նշում, որ «խավարն անցել է և այսօր ապրում ենք հուսալից օրեր», որոնք «իրանց ետևից բերելու են նոր դարուն, նոր կյանք»։

Այդ նոր դարնան ու կյանքի ծիծեռնակը գեղարվեստի ասպարեզում Մյասնիկյանը համարում էր Մ. Գորկուն, որի օրինակով էլ բացահայտեց սոցիալ-դեմոկրատական բանվորական շարժման հետ սերտորեն կապված պրոլետարական գրականության կենարար շունչը, նրա հեղափոխական ոգին։

АЛ. МЯСНИКЯН О ПАРТИЙНОСТИ ЛИТЕРАТУРЫ

ГРИГОР САРКИСЯН

Резюме

Еще с первых шагов своей литературно-публицистической деятельности Ал. Мясникян выступал как страстный защитник и пропагандист ленинского принципа партийности. Он решительно разоблачал бур-

29 «Նոր կյանք», 1912, № 3—4, էջ 110—111։
30 Նույն տեղում, էջ 111։
31 «Մշակ», 1914, № 38։

жуазных лицемеров, раскрывал реакционную сущность их замаскированной партийности.

С этой точки зрения большой интерес представляет статья Мясникяна «Замаскированная монополия» (1907 г.), являющаяся одним из первых откликов в армянской действительности на известную статью В. И. Ленина «Партийная организация и партийная литература».

Анализ упомянутой и других статей, а также писем Мясникяна в данный период его деятельности показывает партийный подход выдающегося марксиста-публициста в вопросах литературы и искусства и его положительное влияние на армянскую интеллигенцию того времени.